

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ (ԾԱԾ. 3.2-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ՋԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ՀՀ Արմավիրի մարզի Պտղունքի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1):

1-ին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի, զորահավաքների իրականացման աշխատանքներին:

Աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

-միջնակարգ կրթություն

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը

կկայանա 2013 թվականի մարտի 11-ին, ժամը 14:00 -ին, Պտղունքի

գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան

պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը:

- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ծևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ, վկայականի, աշխատանքային գրքույկի (բացակայության դեպքում համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակի հետ միասին
- արական սեռի զինվորական գրքույկի կամ դրան փոխարինվող վկայականի հետ միասին:
- մեկ լուսանկար 3×4 չափսի
- անձնագրի պատճեն
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի

3-ի № 310-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված

հիվանդությունների բացակայության մասին հայտարարություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթերը ներկայացնելու,

լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին
և

հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Պտղունքի
գյուղապետարան

կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՍԾ
վարչություն,

ամեն օր ժամը 9:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2013 թվականի մարտի 1-ին